

Սահմանադրություն

Համաշխարհային Հմտությունների Միջազգային Կազմակերպության

I. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ, ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

Հոդված 1

1.1 Անվանումը

Կազմակերպությունը կճանաչվի որպես Համաշխարհային Հմտություններ Միջազգային Կազմակերպություն:

Կազմակերպությունը գործում է ամբողջ աշխարհում, քաղաքականապես, կրոնապես չեզոք է, ինչպես նաև շահույթ ստանալու նպատակ չի հետապնդում:

1.2. Գտնվելու վայրը

Կազմակերպությունը գրանցված է Ամստերդամում և ղեկավարվում է Նիդեռլանդների օրենսդրությամբ:

II. ՆՊԱՏԱԿԸ, ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հոդված 2

2.1 Նպատակը

Հմտությունների խթանում ողջ աշխարհում

2.2 Առաքելությունը

Անդամների համատեղ գործողությունների միջոցով մեծացնել Համաշխարհային տեղեկացվածությունն այն մասին, թե հմտություններն ու իրավասության բարձր չափանիշներն ինչ նշանակալի ներդրում են կատարում տնտեսական հաջողությունների և անհատի դրսևորմանը հասնելու համար:

2.3 Խնդիրները

1. ՀՀՄԿ-ն շուկա հանել՝ ներգրավելով անդամ կազմակերպությունների համընդհանուր ջանքերը
2. ՀՀՄԿ Մրցույթը դնել որպես հմտությունների ճանաչման և առաջխաղացման առաջնային համաշխարհային իրադարձություն
3. Մշակել նոր ժամանակակից ինքնություն և ձկուն կառույց՝ ՀՀՄԿ համընդհանուր գործողություններին աջակցելու համար
4. Մշակել ռազմավարական համագործակցություն ընտրված կորպորատիվ, պետական և հասարակական կազմակերպությունների հետ՝ ՀՀՄԿ հետագա նպատակների համար
5. Տեղեկատվություն տարածել և կիսել գիտելիքներ հմտության չափանիշների, ինչպես նաև՝ ՀՀՄԿ գործունեության հենանիշների վերաբերյալ, հատկապես՝ Համաշխարհային համացանցի միջոցով
6. Հեշտացնել ՀՀՄԿ փորձագետների միջև շփումը՝ հմտությունների զարգացման և նորացման նոր հնարավորություններ մշակելու համար
7. Խրախուսել հմտությունների փոխանակումը, գիտելիքների և մշակույթի փոխանակումը ՀՀՄԿ մասնակիցների միջև, ինչպես նաև այլ երիտասարդների միջև՝ ամբողջ աշխարհում:

2.4 Այս խնդիրներին հասնելու համար ՀՀՄԿ-ն պետք է՝

- Կոչ անի երիտասարդներին, նրանց ուսուցիչներին, մարզիչներին և գործատուներին՝ առևտրի, ծառայությունների և արդյունաբերության ոլորտներում իրավասության համաշխարհային բարձր մակարդակի հասնելու համար, ինչպես նաև՝ աջակցի մասնագիտական կրթության և ուսուցման կարգավիճակին
- ՀՀՄԿ մրցույթներն անցկացնելը կու տարին մեկ անգամ
- Խթանել գաղափարների և փորձի փոխանակումը մասնագիտական կրթության և ուսուցման բնագավառում՝ սեմինարների, հանդիպումների և մրցույթների միջոցով

- Տեղեկատվություն տարածել իրազեկության համաշխարհային բարձր չափանիշների վերաբերյալ
- Փորձել դրդել երիտասարդներին շարունակել իրենց կարիերային համապատասխան հետագա կրթությունն ու ուսուցումը
- Հեշտացնել ողջ աշխարհում մասնագիտական կրթության և ուսուցման կազմակերպությունների միջև հաղորդակցումը և կապը
- Խրախուսել անդամների միջև երիտասարդ մասնագետների փոխանակումը

III. ՂԵԿԱՎԱՐ ՄԱՐՄԻՆՆԵՐ, ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻՆՔ

Հոդված 3

3.1 Ղեկավար Մարմիններ

Կազմակերպության ղեկավար մարմիններն են՝

- Ընդհանուր ժողովը
- Տնօրենների խորհուրդը

3.2 Մշտական հանձնաժողովներ

Կազմակերպության մշտական հանձնաժողովներն են՝

- Ռազմավարության հանձնաժողովը
- Տեխնիկական հանձնաժողովը

3.3 Պաշտոնատար անձինք

3.3.1 Կազմակերպության պաշտոնատար անձինք են՝

- Նախագահ
- Հատուկ գործերով փոխնախագահ
- Ռազմավարական գործերով փոխնախագահ
- Տեխնիկական գործերով փոխնախագահ

- Մշտական հանձնաժողովների փոխնախագահներ
- Գանձապահ
- Գործադիր տնօրեն

3.3.2 Կազմակերպության բոլոր պաշտոնատար անձինք, բացառությամբ գործադիր տնօրենի, ընտրվում են չորս տարի ժամկետով: Պաշտոնատար անձինք ընտրվում են գաղտնի քվեարկությամբ, ընդհանուր ժողովի կողմից և իրավունք ունեն վերընտրվելու ցանկացած պաշտոնում, որը կարգավորվում է “պաշտոնավարության ժամկետի սահմանափակում դրույթով”, ինչպես նախատեսված է Գործող (Մշտական) կանոնակարգեր 3.4 կետով: Խորհրդի թափուր տեղերի դեպքում, ընդհանուր ժողովի հաջորդ նիստի ընթացքում կանցկացվի նոր ընտրություն:

3.3.3 Գործադիր տնօրենը նշանակվում է տնօրենների խորհրդի կողմից: Նշանակման հետ կապված դրույթներն ու պայմանները սահմանվում են ծառայությունների պայմանագրով, ինչպես համաձայնեցված է տնօրենների խորհրդի և գործադիր տնօրենի կողմից:

3.4 Ընդհանուր ժողով

3.4.1. Ընդհանուր ժողովը բարձրագույն մարմին է: Ընդհանուր ժողովը բաղկացած է պաշտոնական պատվիրակներից և տեխնիկական պատվիրակներից, որոնք ներկայացնում են կազմակերպության անդամներին: Յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն, որը կարող է տրվել երկու պատվիրակներից մեկի կողմից:

3.4.2. Ընդհանուր ժողովը գումարվում է տարին մեկ անգամ, նախագահի հրավերով: Այն գլխավորվում է Նախագահի կողմից: Ընդհանուր ժողովի հատուկ նիստ կարող է գումարվել ցանկացած ժամանակ, տնօրենների խորհրդի որոշմամբ կամ անդամների 1/3-ի պահանջով:

3.4.3. Բոլոր նիստերը հրավիրվում են նամակի, ֆաքսի կամ էլեկտրոնային փոստի միջոցով՝ նշելով այն հարցերը, որոնք պետք է քննարկվեն, նիստից առնվազն 6 շաբաթ առաջ:

3.4.4. Ընդհանուր ժողովն ունի հետևյալ իրավասությունները՝

- ա/ Նախագահի, փոխնախագահի, մշտական հանձնաժողովների փոխնախագահների և գանձապահի ընտրություն
- բ/ Տարեկան աուդիտի ենթարկված հաշիվների հաստատում
- գ/ Տնօրենների խորհրդի կողմից ներկայացված հաշվետվությունների և առաջարկությունների համար որոշումներ
- դ/ Հետագա մրցույթների վերաբերյալ որոշումների կայացում
- ե/ Անդամներին ընդունելու վավերացում
- զ/ Անդամների հեռացնելը
- է/ Պատվավոր անդամների կամ պատվավոր նախագահի նշանակումը
- ը/ Մրցանակներին վերաբերող որոշումներ
- թ/ Տեխնիկական հանձնաժողովի առաջարկով մրցակիցներին մրցանակների շնորհման հաստատում
- ժ/ Բյուջեի և տարեկան վճարների հաստատում
- ի/ Գործող մշտական կանոնակարգերի, մրցույթի կանոնների և այլ պաշտոնական փաստաթղթերի հաստատումը՝ տնօրենների խորհրդի առաջարկով
- լ/ Սահմանադրության մեջ փոփոխությունների հաստատումը՝ տնօրենների խորհրդի առաջարկով
- խ/ Կազմակերպության լուծարումը

3.5 Տնօրենների խորհուրդ

3.5.1. Ընտրված տնօրենների խորհուրդը բաղկացած է նախագահից, փոխնախագահներից, մշտական հանձնաժողովների փոխնախագահներից և գանձապահից: Տնօրենների խորհուրդը պետք է ընդգրկի նաև երկու ի պաշտոնե անդամներ, որոնք ներկայացնում են Համաշխարհային Հմտությունների հաջորդ երկու մրցույթների հյուրընկալող անդամներին: Տնօրենների խորհուրդը (ընտրված կամ ի պաշտոնե) կազմակերպության գործունեության վարման հարցում ունեն հավասար կարգավիճակ: Տնօրենների խորհուրդը հաշվետու է ընդհանուր ժողովին:

3.5.2. Տնօրենների խորհուրդը պետք է նիստ գումարի նախագահի հրավերով՝ տարին առնվազն երկու անգամ: Այս նիստը վարում է նախագահը: Գլխավոր գործադիր տնօրենը մասնակցում է նիստերին խորհրդի համար: Տնօրենների խորհրդի հատուկ նիստ կարող է գումարվել ցանկացած ժամանակ, տնօրենների խորհրդի որոշմամբ, անդամների մեծամասնության պահանջով: Բոլոր նիստերի օրակարգը շրջանառվում է նիստից առնվազն վեց շաբաթ առաջ:

3.5.3. Տնօրենների խորհուրդն ունի հետևյալ իրավասությունները՝

- Զբաղվում է վարչական և գործառնական հարցերով
- Գործող կանոնակարգերի նախապատրաստում
- Արտադրական պլանի նախապատրաստում
- Մրցույթների որակի հսկում
- Հանձնաժողովների նիստերի համակարգում
- Հանձնաժողովների կողմից ներկայացված առաջարկությունների քննարկում
- Հանձնաժողովների նիստերի արդյունքների համակարգում և ընդհանուր ժողովին զեկուցում
- Գլխավոր գործադիր տնօրենի նշանակում

- Տնօրենների խորհրդի անդամների կողմից կատարման ենթակա հասուն կ առաջադրանքների վերաբերյալ որոշումների կայացում
- Կազմակերպության տարեկան հաշվետվության հաստատում
- Հանրային ոլորտի որակավորված հաշվապահի նշանակում
- Տարեկան հաշիվների հետ կապված որոշումների կայացում
- Այլ կազմակերպությունների հետ կապեր
- Նոր անդամների ընդունում (ընդհանուր ժողովի հաստատմամբ, տես՝ 4.2 կետ)
- Որակի աուդիտորի նշանակում
- Մրցույթի արդյունքների վերլուծություն և հիմնական ուսուցման հնարավոր նախաձեռնություններ
- Մրցույթի անցկացման վայրերի համակարգում և ընդհանուր ժողովին առաջարկությունների ներկայացում
- Աշխատանքային խմբերի ստեղծում

3.6 Ռազմավարության Հանձնաժողով

Ռազմավարության հանձնաժողովը բաղկացած է պաշտոնական պատվիրակներից: Այն ղեկավարվում է ռազմավարական գործերով փոխնախագահի կողմից և գումարվում միայն նրա հրավերով: Այն ունի ռեֆլեկտիվ (արտացոլական) դեր և աշխատում է հնարավոր ռազմավարությունների և մեթոդների վրա՝ կազմակերպության նպատակները և խնդիրներն իրականանցելու համար՝ ըստ այն կողմնորոշման, որի համար եկել են համաձայնության

3.7 Տեխնիկական Հանձնաժողով

Տեխնիկական հանձնաժողովը բաղկացած է տեխնիկական պատվիրակներից: Այն ղեկավարվում է տեխնիկական գործերով փոխնախագահի կողմից և գումարվում միայն նրա հրավերով, ինչպես նաև՝ զբաղվում է մրցույթին վերաբերող բոլոր տեխնիկական և կազմակերպչական բնույթի հարցերով:

IV. ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հոդված 4

4.1 Բնորոշումը

Անդամ տերմինը նշանակում է մարմին, որը ներկայացնում է մասնագիտական կրթության և ուսուցման համակարգ երկրի/տարածաշրջանի առևտրի, ծառայության և արդյունաբերության ոլորտներում և ճանաչված է որպես այդպիսին Կազմակերպության կողմից:

4.2 Ընդունելություն

Անդամների ընդունելությունը տնօրենների խորհրդի իրավասությունն է և պետք է հաստատվի ընդհանուր ժողովի կողմից (ընդունելության գործընթացը ղեկավարվում է կազմակերպության գործող կանոնակարգերի կողմից):

4.3 Պատվիրակներ

Անդամը ներկայացվում է պաշտոնատար անձի կամ տեխնիկական պատվիրակի կողմից:

4.4 Հրաժարական

4.4.1 Անդամը կարող է հրաժարական տալ օրացուցային տարվա վերջում, պայմանով, որ նա իր մտադրության մասին գրավոր ծանուցում է գործադիր տնօրենին՝ առնվազն վեց ամիս առաջ:

4.4.2. Անդամակցության վերջում անդամը պետք է իր պարտավորությունները փոխանցի կազմակերպությանը

4.5 Տեղեկատվություն

Յուրաքանչյուր անդամ պարտավոր է անհապաղ ծանուցել տնօրենների խորհրդին իր կազմակերպության ներսում ցանկացած նյութական փոփոխության վերաբերյալ, որը կարող է ազդեցություն ունենալ իր անդամակցության վրա:

4.6 Հեռացում

4.6.1 Անդամը կարող է հեռացվել ընդհանուր ժողովի կողմից՝ սահմանադրության, կազմակերպության նպատակների լուրջ, կրկնվող խախտումների, կամ ֆինանսական պարտավորությունների նկատմամբ անփութություն ցուցաբերելու դեպքում, պայմանով, որ քվեարկության իրավունք ունեցող անդամների $\frac{3}{4}$ -ը ներկայացել է նիստին և կողմ է քվեարկել:

4.6.2. Ընդհանուր ժողովը քվեարկում է տնօրենների խորհրդի առաջարկի հիման վրա՝ պատշաճ գործընթացի պահանջները բավարարելուց հետո:

V. ՖԻՆԱՆՍՆԵՐ

Հոդված 5

5.1 Ֆինանսական տարի

Կամզակերպության ֆինանսական տարի է համարվում հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ:

5.2 Եկամուտ

Կազմակերպության եկամուտը ներառում է՝

- Անդամակցության ընդունելության վճարներ
- Տարեկան անդամակցության վճարներ
- Մասնագիտական ծառայությունների համար վճարներ

- Տեխնիկական նկարագրերի, գրականության վաճառքը, վերլուծություններից և համաժողովներից եկամուտները
- Կամավոր նվիրատվություններ
- Հովանավորների վճարներ

5.3 Տարեկան վճարներ

Տնօրենների խորհրդի առաջարկությամբ ընդհանուր ժողովը սահմանում է տարեկան վճարները՝ բյուջեին համապատասխան

5.4 Վարձատրություն

Կազմակերպության անդամները և նրանց պատվիրակներն իրենց ծառայությունների դիմաց չեն վճարվում:

5.5 Պարտավորություն

5.5.1 Ցանկացած պարտավորություն պետք է իրականացվի Կազմակերպության հիմնական միջոցների հաշվին:

5.5.2 Անդամները, որոնք հրաժարվել են կամ հեռացվել կազմակերպությունից ընդհանուր ժողովի որոշմամբ, որևէ պահանջ չունեն կազմակերպության ակտիվների նկատմամբ:

5.6 Աուդիտ

Հաշիվները և կազմակերպության ակտիվների և պասիվների մասին հաշվետվությունը պետք է ենթարկվեն աուդիտի՝ հանրային ոլորտի որակավորված հաշվապահի կողմից, նախքան ընդհանուր ժողովին ներկայացնելը

VI. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 6

Պատվավոր Նախագահ, Պատվավոր Անդամներ

Տնօրենների խորհրդի հաստատմամբ, նախկին պատվիրակները կամ կազմակերպության նախկին նախագահը կարող են նշանակվել համապատասխանաբար պատվավոր նախագահ կամ պատվավոր անդամներ:

Հոդված 7

Գործող (Մշտական) Կանոնակարգեր

Տնօրենների խորհուրդը պետք է անհրաժեշտության դեպքում մշակի գործող կանոնակարգեր՝ կազմակերպության գործերը կանոնավորելու և կազմակերպության պաշտոնատար անձանց և հանձնաժողովների կանոնները և պարտավորությունները սահմանելու համար:

Բոլոր նման գործող կանոնակարգերը պետք է ներկայացվեն ընդհանուր ժողովի հաստատմանը:

Հոդված 8

Մեկնաբանում

Սահմանադրության և բոլոր իրավական հարցերի մեկնաբանության համար գերակայում է անգլերենը:

Հոդված 9

Մեռ

Այն բառերը, որոնք վերաբերում են միայն արական սեռին, պետք է վերաբերեն նաև իգական սեռին:

VII. Եզրափակիչ դրույթներ

Հոդված 10

10.1 Փոփոխություններ

Սահմանադրությունը կարող է փոփոխվել ընդհանուր ժողովի կողմից, պայմանով, որ նիստին ներկայացած և քվեարկելու իրավունք ունեցող անդամների 2/3-ը կողմ են քվեարկում:

10.2 Լուծարում

Կազմակերպությունը կարող է լուծարվել ընդհանուր ժողովի կողմից, պայմանով, որ նիստին ներկայացած և քվեարկելու իրավունք ունեցող անդամների 3/4-ը կողմ են քվեարկում:

Լուծարման դեպքում կազմակերպության ակտիվները վերադարձվում են անդամներին՝ իրենց վերջին տարեկան անդամության վճարների համամասնությամբ:

10.3 Ներկայացուցչություն

Տնօրենների Խորհուրդը կամ Նախագահը և մեկ այլ ընտրված պաշտոնյա, կամ Նախագահ, Գործադիր Տնօրենի հետ միասին, իրավասու են ներկայացնելու Կազմակերպությունը:

10.4 Ուժի մեջ մտնելու ժամկետը

Սույն Սահմանադրությունը վավերացվել է ընդհանուր ժողովում՝ 2011թ հոկտեմբերի 02 -ին: Այն փոխարինում է 2009թ սեպտեմբերի 06 -ին Կալգարիում հաստատված Սահմանադրությանը և մինչ օրս գործող բոլոր կանոնակարգերին և ուժի մեջ է մտնում 2011թ հոկտեմբերի 02 -ին:

Վերանայումներ

S1.0	Լիսաբոն, 15.06.00	Թջերկ Դյուսսելդորփ, Դանիել Սումներ
S1.1	Աուկլանդ, 14.03.02	Վերանայված և փոփոխված՝ Թջերկ Դյուսսելդորփ, Դանիել Սումներ
S2.0	Հոնգ Կոնգ, 10.05.04	Վերանայված և փոփոխված՝ Թջերկ Դյուսսելդորփ, Շեիլա Ռուիգրոք (Գործող)
S2.1	Հելսինկի, 25.05.05	Վերանայված և փոփոխված՝ Թջերկ Դյուսսելդորփ, Դավիդ Հոեյ
S2.2	Մելբուռն, 10.05.06	Վերանայված և փոփոխված՝ Թջերկ Դյուսսելդորփ՝ Նախագահ
S3.0	Կալգարի, 06.09.09	Դավիդ Հոեյ՝ Գլխավոր Քարտուղար
S3.1	Լոնդոն, 02.10.11	Վերանայված և փոփոխված՝ Թջերկ Դյուսսելդորփ՝ Նախագահ Դավիդ Հոեյ՝ Գործադիր Տնօրեն

